

# Սարակապ

Վարչական ղեկավար՝ Վահրամ Մկոյան

Հեռ 098 28 38 25

Մակերես՝ 26.3կմ<sup>2</sup>

Բնակչություն՝ 625

[sarakap.shirak@mta.gov.am](mailto:sarakap.shirak@mta.gov.am)

Գյուղ Մարալիկի տարածաշրջանում, Մարալիկ քաղաքից 10կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 35կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Բոզդողան, Պոզտողան անվանումները: Սարակապ է վերանվանվել 1935 թ-ին: Գյուղը տեղադրված է Ախուրյան գետի ձախափնյա հովտում՝ ծովի մակարդակից 1570մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ:

Տարեկան տեղումների քանակը 450-500մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններն են: Ունի աղբյուրներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր: Ունի տուֆի, բազալտի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն:

Գյուղի շրջակայքում պահպանվել են կիկլոպյան ամրոցի ավերակներ: Գյուղն ունի 7-րդ դարում կառուցված ս. Աստվածածին անունով եկեղեցի և Կարմիր վանքը:

Գյուղի բնակչության նախնիների մի մասը տեղափոխվել է Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Բասենի շրջաններից 1915-1920թթ: 1831 թ-ին գյուղն ունեցել է 70, 1897 թ-ին՝ 937, 1926 թ-ին՝ 597, 1939 թ-ին՝ 910, 1959 թ-ին՝ 686, 1979 թ-ին՝ 649, 1989 թ-ին՝ 550 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 625 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 48%, կանայք՝ 52%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 50%, հետաշխատունակներ՝ 21%: Ունի 62 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 595հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 134 և 1790 հեկտար: Զբաղվում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Սարակապ

Բնդեքս՝ 2902